Արձանագրություն N 2
<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

09 հունվարի 2024թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ավագյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Առուշանյան
Ա. Քյոսեյան
Քարտուղար՝ Վ. Ղազարյան

1. <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8**>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերը eauction.armeps.am համակարգում /այսուհետ՝ Համակարգ/ բացվել են 2024թ. հունվարի 9-ին, ժամը 10:00-ին:
2. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:
3. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:
4. Էեկտրոնային հակադարձ աճուրդը համակարգում սկսվելու է 2024թ. հունվարի 10-ին, ժամը 10:00-ին:
5. Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ 2024թ. հունվարի 11-ին, ժամը 14:35:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

11 հունվարի 2024թ.
Ժամը՝ 14:35

6. << **ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8**>> ծածկագրով ընթացակարգի հակադարձ աճուրդը սկսվել է Համակարգում 2024թ. հունվարի 10-ին, ժամը՝ 10:00-ին:
7. Սահմանված ժամկետում էլեկտրոնային աճուրդ ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	**Մասնակցի անվանումը**	**Տվյալները**
1	ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, հեռ. +37443660667
2	«ԻՓԻԷՍ» ՍՊԸ	ք. Երևան, Նար Դոս 1, հեռ. 093727373
3	ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ	Ք.Երևան,Երկաթուղայիններ 4փ 2/6, հեռ. 097900115

8. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման հայտով հատկացված ընդհանուր գին	Մասնակիցների անվանումները և աճուրդի արդյունքում ներկայացված վերջին գնային առաջարկները (ՀՀ դրամ)*					
					ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ		ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ		«ԻՓԻԷՍ» ՍՊԸ	
					Գնի առաջարկը		Գնի առաջարկը		Գնի առաջարկը	
					առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ	ներառյալ ԱԱՀ
1	համակարգչային մոնիտոր	հատ	3	240000	199990	239988	99000000	118800000	203333	243999.60
2	սեղանի համակարգիչներ	հատ	3	1080000	896000	1075200	99000000	118800000	906667	1088000.4
3	տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 23 էջ/րոպե արագության	հատ	3	648000	-	-	99000000	118800000	540667	648800.4

***Եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում, ապա լրացվում է միայն ''առանց ԱԱՀ'' սյունակը**

9. Համակարգում «ԻՓԻԷՍ» ՍՊԸ -ի կողմից և ԷԼ ԸՆԴ ԷՎ ՍՊԸ-ի կողմից 1, 2, 3 չափաբաժինների մասով ներկայացված հայտերը աճուրդի ամփոփումից հետո Համակարգը ավտոմատ մերժել է, քանի որ ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման հայտով սահմանված գները:

10. Էլեկտրոնային աճուրդն ամփոփվելուց հետո արձանագրվեց, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից է հանդիսանում **ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ն՝** 1, 2 չափաբաժինների մասով:

11. Հանձնաժողովը որոշեց առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

17 հունվարի 2024թ.
Ժամը՝ 14:30

12. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ուղարկված հայտը Համակարգում կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան և ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի և տեխնիկական բնութագրի, որոնցում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

- 1-ին չափաբաժնում /համակարգչային մոնիտոր/ անհրաժեշտ է նշել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը
- 2-րդ չափաբաժնում /սեղանի համակարգիչներ/ անհրաժեշտ է նշել ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողի անվանումը, տեխնիկական բնութագրում հստակեցնել պրոցեսորի տեսակը (նշել Ինտել Քոր այ5 /Intel Core i5/, թե էյԷմԴի Ռայզեն 5/AMD Ryzen 5/), և քեշ հիշողության չիփսեթը (նշել ԻՆՏԵԼ ՔՅՈՒ 670/ Intel Q670/, թե էյԷմԴի /AMD/), ինչպես նաև հստակ նշել միջուկների քանակը:

13. Հանձնաժողովը որոշեց 1 աշխատանքային օրով կասեցնել նիստը և ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

14. << ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի հաջորդ նիստը նշանակել 2024թ. հունվարի 19-ին, ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, 615 աշխատասենյակում:

<< ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

ք. Երևան

19 հունվարի 2024թ.
Ժամը՝ 10:00

15. Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական շտկված նկարագրերը և տեխնիկական բնութագիրը, ուստի հանձնաժողովն որոշեց ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ-ի հայտը գնահատել հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող:

16. Ներկայացված հայտերի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված <<Էլեկտրոնային աճուրդի իրականացման>> կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը, <<**ՀՀ ՎԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/8**>> ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց **ճանաչել ընտրված մասնակից** ԿՈՄՊԳԱՐԱՆՏ ՍՊԸ -ին՝ 1, 2 չափաբաժինների մասով:

17. Հանձնաժողովը արձանագրեց, որ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկները գերազանցել են գնման հայտով սահմանված գինը, ուստի տվյալ չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարվեց չկայացած:

18. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

19. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

Գնահատող հանձնաժողովի նախագահ _____ Ա. Ավագյան

Հանձնաժողովի անդամներ

_____ Ա. Առուշանյան

_____ Ա. Քյոսեյան

Քարտուղար

_____ Վ. Ղազարյան